

Կ Ա Ի Է Թ Ռ Զ Ո Ւ Ն Ը

ԵՆ Ի ԶԵՌԱՏ ԾՈՒՈՒՄԻ  
ԹՐՈՒՆԻ ԹՐՈՒՆԻ ԿԵՆԿԵՆՆԵՐ

Ի Նազարէթ\*, ծաղկանց քաղաք  
Արամահնայ մը շուքիմ տակ,  
Որ Մարիամուն մօտ էր տըմակ,  
Քրսամ սրղայք հաւաքունք եմ,  
Ձեռներն իրենց վարդով եմ լի,  
Եւ այն ծաղկով\*\* որ կը բուսնի  
Խառն ըմբ ցորենի :

Թատակը կաւ աղբը մը քով  
Դրթեմ կակուղ բոնը մեղմով  
« Կեանք, գուշ, հոս՝ ժպտելով  
Զօրագլուխն այն ժիւր գընդին -  
Այս շուքիմ քով, տակն այս շուքիմ  
Կ'առաջարկեմ գործ մի զըւարթ  
Ուշ զըրէք արը :

« Կը տեսմէ՞ք հողը շէկ գոյնով,  
Շիմնք ամկից մատով, բուծով  
Մամուռն տակ երգող թռչունակն  
Կամ գեղեցիկ մի ծիծեռնակ -  
Որուն որ գործն ըլլայ աղուոր  
Մեր համդիսին ըլլայ թագուր  
Ամբողջ մէկ օր » :

Սկսած գործի ամենքը մէկ,  
Վեր քաշուած եմ վաղ իրենց թեւք,  
Ամենքն յաշող թէ անյաշող  
Թըրմեն զամգեմ այն կարմրուկ հող -  
Եւ թռչնիկներն եռամղազիմ  
Ամմիջապէս զընեն գետին  
Վերայ մարգիմ :

Բայց այն խըմբին մէջ մամկակամ  
Ամէնքը մէկ կ'ուզին մակամ -  
Եւ խոռվեցաւ յամկարծ դաշտիկն  
Իրենց վէճով, կագով սաստիկ -  
Ամէն մէկն իր գուշ թըռչունակ,  
Ամենք կ'ուզին այն սրղցամակ  
Այն աղուոր թագ :

Միմէ վիճէր գունըն այն մամկակամ  
(Արուեստուրաց շատ բնական բան)  
Կու գայ տատրակ մ'ազմի զողտրիկ  
Համզիւի հոռ տեղ մամբուն մօտիկ,  
Չարդ մը կ'առնու այն մամկամց միմ,  
Յըցնէ անոր, որ խընդազիմ  
Գայ իր ձեռքիմ :

\* Նազարէթ՝ ծաղիկ կը թարգմանուի :  
\*\* Կակուշ, նարանիկ :


Եւ իրեն միւս թաթով փափկիկ  
Կ'առնու իրեն շինած թըռչնիկ,  
Եւ զարմացած գընդին առջիւ  
Վըրամ փըշէ շուռն մի թիթեւ -  
Եւ Յիսուսի շըթթեբրուն տակ  
Կը ծըծի մի յոյն մըմամակ  
Քըմքուշ տատրակ :

Ծօծայ թըռչնիկն իր մատին վրայ  
Նայի երկիմք և վեր սլանայ . . .  
Ջարմամն մակ լրոնիկ մընջիկ -  
Ժըպտին, սակայն սոսկամ սաստիկ -  
Ապա զըւարթ գունըն կարդայ  
« Կեցցէ՛ որդին Մարիամայ  
Տէր մեր արքայ » :

Դուր ոտից տակ ցանեն ճիւղք,  
Ցանեն կարմիր, ճեղքով վարդք,  
Ցանեն կակաշ, կուսածաղիկ . . .  
Հուսկ ծըռնցիմ իրենց գըլիկի  
Եւ կ'երգէին - « Կեանք, յաղթուի՛րն . . .  
Ծիսուս, արքայ մեր ամենուն,  
Քեզ օրհնուի՛րն » :

Ես եմ կաւէ թըռչնիկս այս հէք,  
Հոգւոյս թեւերն եմ դիւրաբեկ,  
Բայց Յիսուս քու Անտարան  
Իմծի կենաց ցըցուց ճամբան -  
Քեւ ապրի ամեն իմ, քեզ յուսայ,  
Աստուած իմ, դու իմն գերակայ  
Տէր և Արքայ :

Թրք. Հ. Ա. ՂԱՅԻԿԵԱՆ Հ. ՏԸՆԱՐՈՐԻ



Գ Բ Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն Ա Կ Ն Ա Բ Կ Ն Ե Բ

1. Բաղդատուծիւն Տպագիր Սոկրատի  
եւ Երուսաղեմի ձեռագրին, հրատարակիչ  
Սահակ Եպիս-Խապայեան, ի տպ. Առաքելա-  
կան Ս. Արտոյ Ս. Յակոբեանց յերոսաւ-  
դիւն, 1898 :

Հնդհանուր ուրախութեան և զրուստեաց  
Հայնեբով ողջունուեցաւ՝ Սոկրատայ Ար-  
լատիկոսի Ելիեղեցական պատմաբան Հայե-  
րէն Հին թարգմանութիւնն, որ անցեալ տա-  
րի (1897) լոյս տեսաւ Էջմիածնի տպա-  
րանէն, արդեամբք արժանապատիւ Միսրոպ  
վարդապետի Տէր Մովսիսեան, որուն Հմուտ  
ներածութիւնն յիրաւի ամենայն զովկասից

արժանի է: Միայն մէկ կամ երկու բանա-  
սերք եղան<sup>1</sup>, որքան կը յիշեմ, որք մի բանի  
արարք դիտողութիւններ ըրին նոյն զրոց  
հրատարակութեան ինչ ինչ թերութեանց  
մասին. օրինակ իմն, տպագրական սխալնե-  
րու և ձեռագրի ակնյայտնի վրիպակները ան-  
փոփոխ թողուն. որոց՝ յարգելի հրատարա-  
կիչն Արարատ թերթին մէջ<sup>2</sup> պատասխանե-  
լով, տպագրութեան դժուարութիւնները պատ-  
ճառ կը բերէ այն բանին, թէ և գոհացուցիչ  
չէ այն: Յետաջ քան զայդ, Սոկրատայ յա-  
ռաջարանին մէջ՝ յէջ Ե, կը ծանուցանէ Տէր  
Մովսիսեան, թէ « Համզուելով որ ստրկա-  
կան յունարան թարգմանութիւնը եթէ կէ-  
տադրութեամբ չորոշուի, շատերի համար ա-  
ւելի անհասկանալի կը լինի, վճռեցի հե-

տեւել յունարէն բնագրի կէտադրութեանը ».  
և միանգամայն նայելով թէ « Մեծ Սոկրատի  
յունարան բնագրի շատ անհասկանալի կամ  
զժուար հասկանալի հատուածներ ունի, կը  
յաւելու նոյն ինքն, որ միայն յունարէնի օգ-  
նութեամբ կհասկացուի, աշխատել է ծանօ-  
թութիւններով փոքր թեթեւութիւն տալ »:  
Յետ այս ծանուցման՝ ի հարկէ մարդ տելի  
բանի մը կը սպասէ՝ քան ինչ որ է, և յու-  
ստիքար կ'ըլլայ՝ երբ զննող աչօք կը կարդայ  
զիրքը և կը համեմատէ զայն յունարանի հետ:  
Նախ կիտադրութեան գալով, մէջ բերենք մի  
ս և է օրինակ, յորում պիտի տեսնուի թարգ-  
մանչին չափազանց կապուածութիւնը բնա-  
գրին և հրատարակչին անմտադրութիւնը կի-  
տադրութեան մասին.

ԳՌԻՐ Ա. ԳՂ. Ա. (էջ 2, սող 1-4).

« Իսկ մեր նախագրեալ շարագրել զառի  
նմանէ մինչեւ առ յեկեղեցւոյն եղելոյ պատ-  
ճառայն: Սկիզբն յորոց նոյն...<sup>3</sup> արասցուք  
ոչինչ պատմութեան դժարանանց՝ հոգ տա-  
րեալ »:

Ուրիշ տեղ մը դարձեալ յառաջաբանին  
մէջ կը կարդաւք, թէ Տէր Մովսիսեան ամ-  
բողջ Մեծ Սոկրատը բաղդատելով յունարէն  
բնագրին հետ, « Համեմատութեամբ սրբագրել  
եմ, կ'ըսէ, մեր ձեռագրի սխալները, որոշել  
բնագրի և թարգմանութեան մէջ եղած տար-  
բերութիւնները<sup>4</sup> », և այն: Իբրև է, կը տես-  
նենք որ մերթ կը սրբագրէ նա և մերթ թերի  
մասերը կը լրացնէ բնագրին վրայէն, և եր-  
բեմն ալ դիտողութիւններ կ'ընէ, ծանօթու-  
թիւններ կը գնէ, և այն. բայց ընդհակա-  
ռակն ուրիշ յ'ըբան տեղեր կարծես յարզան-  
քով կը վարուի թարգմանչին և զրչագրաց  
այլանդակ սխալներուն հետ, մտնել և տար-  
տամ բացատրութեանց վրայէն սահելով

ԳՂ. Ա. 5 (էջ 5, սող 13-16).

« Ημεῖς δὲ προθέμενοι συγγράψαι τὰ ἐξ  
ἐκείνου μέγρι, τὰ τῆδε περὶ τὰς ἐκκλησίας  
γενόμενα, τῆς ὑποθέσεως ἀρχὴν, ἐξ ὧν ἐκείνου  
ἀπέλιπε, ποιησόμεθα. Οὐ φράσεως ὄγκου  
φρονεῖλλοντες,

կ'անցնի, և ուր որ կարելի էր իմաստը պար-  
զել կամ լրացնել՝ կամ անջատելով միա-  
ցած բառերը և անոնց մասերը, և կամ բառի  
մ'անջատ մասերը միացնելով, հրատարա-  
կիչն այնքան լուռ և անխոսով կ'անցնի, որ  
և ոչ փոքրիկ կասկած մի կ'ուզէ արթնցնել  
ընթերցողի մտքին մէջ, որպէս թէ բնա-  
ուղղելու կամ դիտողութեան արժանի բան  
մը չըլլար անդ: Ոչ նուազ իբրև է դարձեալ,  
թէ այդ շահագրգիռ երկասիրութիւնն զգալա-  
տաբար ոչ քաջ յունագէտ և ոչ ալ հայկա-  
բան թարգմանչի հանդիպեր է, որու թարգ-  
մանութեան արուեստն յայնմ միայն կը կա-  
յանայ, որ յունարէն բառերուն դիմաց հա-  
մապատասխանող հայերէն բառեր գնէ, յունա-

1. Տես Բագրևաթկայ, 1897, դեկտ. 565-575.  
« Սոկրատայ հին թարգմանութեան հրատարա-  
կութիւնն և Մ. Խորենացի ». Հ. Բ. Մարգինեան:  
2. 1898. Թիւ Գ և Գ. մարտ և ապրիլ. « Սոկ-  
րատ պատմագիր և Մ. Խորենացի ». 169, ծա-  
նօթ. :  
3. Այս տեղ ἀπέλιπε, երոզ բառն կը պակտի,  
որ կը գտնուի Երուսաղէմի ձեռագրին մէջ :

Հրատարակիչն առանց դիտողութեւն մ'ընելու  
անցի է:  
4. Յունարէն ὄγκος φράσεως կը նշանակէ  
« Պերճութիւն, շքեղութիւն, պաճուճանք,  
բարձրութիւն բանից կամ ոճոյ »:  
5. Հրատարակութիւն Heurici Valesii, Au-  
gustae Taurinorum, 1746.  
6. Յառաջարան Մեծ Սոկրատայ, էջ Գ-Գ:

րնին հօղիներով, նախդրներով, բայերու նոյն ժամանակներով, և մի և նոյն կարգով. որով յաճախ՝ հայ զգեստի ներքեւ՝ հրէշ մ'է որ գուրս կ'ենէ թարգմանչին գրչն; զոր անկարելի է հասկնալ առանց բնագրին օգնութեան:

Երկրայ (1898) տարւոյ մէջ, ի մեծ զուգութիւն բանասիրաց, Գեր. Սահակ Խապոյեան եպիսկոպոսն ի լոյս ընծայեց Երուսաղեմի տպարանէն, « Բաղդատութիւն տպագիր Սոկրատի և Երուսաղեմի ձեռագրին », 95 էջերով տետր մի, որ բաւական լոյս կը սփռէ իւր ընտիր ընթերցուածներով և կ'օգնէ սրբագրելու տպագրին ոչ ասկաւ սխալները: Տետրին սկիզբը կը գտնեն ընթերցողը բացատրուած սոյն հրատարակութեան պատճառները, որք են. « Ա. Յիշեալ պատմութեամբ հետաքրքրուող հայ բանասէրները՝ սխալ ընթերցմամբք, որք իրենց յաճախութեամբ պատմութիւնը խրճնացուցեր են, սխալ զաղափարներ կազմել զերծ պահպանելու: Բ. Արժ. Մեսրոբ վարդապետին... գիրութիւն տալու, որ իրենց բաղմասխալ և պակասագիր օրինակը վերականգնէ և նոյնին երկրորդ հրատարակութիւնը

աւելի կատարելագործէ»: Եւ Ք, որ զիստար դրոյնն եղեր է այս բաղդատութեան ձեռնարկելու, այն է. « Եզրակացնել թէ կրկին ձեռագրները (Էջմիածնի և Երուսաղեմի) միմեանցից բոլորովին տարբեր օրինակներէ արտագրուած են. Երուսաղեմիը աւելի վստահելի և ընտիր օրինակ է լեզուի օրինաց համաձայն ընթերցուածովք. ուստի Էջմիածնի օրինակին մէջ աչքի զարնող պակասութիւնք չկան Երուսաղեմի օրինակին մէջ »: Այո՛, եթէ ընդհանուր կերպով նկատենք՝ այդպէս է, ինչպէս յայտնի կը տեսնուի բաղդատութեան մէջ երկուքին դէմ առ դէմ գրուած տարբեր ընթերցուածներէն. բայց երբ երկուքն եւս համեմատուին թաւորին հետ, պիտի համոզուինք, որ Երուսաղեմի օրինակին մէջ եւս կան ոչ նուազ աչքի զարնող կարեւոր վրիպակներ, որք ընդհանրապէս չկան գտնուիր Էջմիածնի ձեռագրին մէջ: Ի հաստատութիւն ըսածին՝ կը գնեմ աստ հետեւեալ մի քանի օրինակները՝ որք աչքիս պատահեցան, որ եթէ դիտող աչօք քննուի և բաղդատուի բնագրին հետ, անշուշտ ուրիշ շատեր եւս պիտի գտնուին:

Ե ԶՄԻՆՆԵՆ Ե ՉՊԱԳԻՐ

- 33. գ. Քանդի միոյ ի քաղաքացն կիպրոսի.
- 36. Է. Մինչեւ ցՅագաւաբութիւն նոր թէճոստի եհաւա.
- 21. գ. Քանդի Սարինոս որ յԵրասկիտ թափա.
- 78. ժա. Որ յՄարտիս եւ պիսկոպոս Էրեւանցի՝ հատողաց զհամագոյութիւն.
- 179. ա. Գոչէին յերկարս նենգութիւն կրել.
- 183. ժր-ա. Ղախ Ղիւրիոս Հոռովմս կպիսկոպոսն հրատարեալ ի միարանաքննեացն հաւատոյն արտաքսի.

ԵՐՈՍՍԱՂԵՄՈՅ ԶԵՌԱԳԻՐ

- 28. գ. Քանդի զմիոյ ի քաղաքացն կպիսկոպոսի.
- 30. բ. Մինչեւ ցՅագաւաբութիւնն որ թէճոստի եհաւա.
- 17. ժե. Քանդի Սարինոս, որ Հերակիտ արտապա.
- 57. Է. Որ յՄարտիս կպիսկոպոս Երեւանցի հատողաց զհամագոյութիւն.
- 126. իր. Գոչէին յերկարս նենգութիւն կրել.
- 131. Է-բ. Ղախ Ղիւրիոս Հոռովմս կպիսկոպոսն հրատարեալ ի միարանաքննեացն հաւատոյն արտաքսի.

ՅՈՒՆ. ԲԵՍՊԻՐ

Չ'ς μις των εν Κύπρω πόλεων.  
 Άχει της βασιλείας νέου Θεοδοσίου.  
 Σαβίνος γάρ, δ των εν Ήρακλεία της Θράκης.  
 Ε'ν Συρία επίσκοπος, εις δν των μισούτων τὸ ὄμοσούσιον.  
 Ε'βδων μακρά, δδλον ὑπομένειν.  
 Πρωτος μεν Λιβέριος δ της Ρώμης επίσκοπος παραιτησάμενος εκείνη τῇ πίστει συνθέσθαι, εδριστος γίνεται.

1. Սոյն անձանքի Էրեւանցի կամ Երեւանցի անունն փոխանակ՝ յուշարէն ունի « εις δν των μισούτων » և այլն. որ է, « Մի գոչով յատուցողացն » (և չէ հատողաց), և այլն. թերեւս

Թարգմանիւն յատուկ անուն կարծեր է զայն, էրբ Էլջօտան, և ապա ճ գիտէ ինչպէս զընտրաց մէջ Էրեւանցի կամ Երեւանցի եղեր է:

ԷԶՄԻԱՆԵՆ ԵՊԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱԿԱՆՍՈՒՆ ԶԵՌԱԳԻՐ

ՅՈՒՆ . ԲՆԱԳԻՐ

234. գ-դ. Ղուկիփեռ երկարացեալ եպիսկոպոս, իսկ Եւսեբիոս Բերկիւղացեաց.

383. ժր. Կեցեալ ամս ԾԻ.

392. Ի Հելուպուսոն Վազէսի Ե.

429. գ. Թղթովք գորս իսրեան միթարէին.

494. ա. Էր ի խորին Ասորոց.

596. ժդ. Ի կոչեցեալն Կիւստանայ կոյս քարեալ.

598. ժ. Քառուանթոս է ամ... առաջնորդ եղեալ.

291. գ. Արգելմամբ ախտին ըմբռնեալ վարձանեցաւ.

234. գ. Երկորեանն ի Վերին Թերայ.

463. Ե. Չիւրդ սորա առ թիւ աւուրցն երկձայնեալք.

173. գ-է. Ղուկիփեռ Երկարացեալ եպիսկոպոս, իսկ Եւսեբիոս Բերկիւղացեաց.

264. իգ. Կեցեալ ամս յորս.

269. իդ. Ի Հելուպուսոն Վազէսի Ե.

290. դ. Թղթովք գորս սիրեացն միթարէին.

2. գ. ա. Էր ի հովտեն Ասորոց.

399. ժգ. Ի կոչեցեալն Աստանայոյս քարեալ.

400. ժր. Քառուանթոս է ամ... առաջնորդ եղեալ.

215. գ. Արգելմամբ ախտին ըմբռնեալ վարձանեցաւ.

173. Երկորեանն ի վեր ի Լիւրիոյ.

314. իս. Չիւրդ սորա առ յոր աւուրցն երկձայնեալք.

Λούκιος μὲν Καράλων ἐπίσκοπος, Εὐσέβιος δὲ Βρεκέλλων.

Ζήσας ἐτῆ 54.

Κατὰ τὴν ὑπατεῖαν Οὐάλεντος τὸ πέμπτον.

Καὶ γράμμασι τοὺς οἰκείους παρεμυθεύοντο.

Ἦν τῆς Κοίτης Συρίας. (Ի Ս. Քիրոս Թարգմանի միջոց յստորին Ասորիք)

Ἐπὶ τὸν καλούμενον Κινάρω τὰ μέλη συνάραντες.

Χρῶσανθος ἐπὶ ἑπτὰ ἐτῆ... πρόστας.

Ἐφ' τῆς ἐμφράξεως νοσήματα συσχεθεὶς ἐπιλεύτησεν.

Ἀμφοὺν οὖν τῶν ἄνω Θηβῶν.

Πῶς οὗτοι περὶ τὸν ἀριθμὸν τῶν ἡμερῶν διαφωνοῦντες εἰς.

Վերը ըսինք, թէ յարգ. Հրատարակիչն յաճախ առանց սրբազրիւտ թողուցեր է թարգմանիչն կամ գրչազարաց ակնյայանի սխալնբը, և ոչ իսկ ծանօթութիւնն զրեր է անոնց,

և այլն՝ Որպէս զի գորս տեղ բաժ չըլլանք այս խօսքերը, կը ներկայացնենք ընթերցողաց հետեւեալ քանի մի օրինակները.

ԷԶՄԻԱՆԵՆ ԵՊԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱԿԱՆՍՈՒՆ ԶԵՌԱԳԻՐ

ՅՈՒՆ . ԲՆԱԳԻՐ

3. ժ. Իսկ ի Կայսերին Սեւերեայ Գաղերիոս Մարսիւնոս առաքեալ<sup>1</sup>.

653-4. ա. Մերթ զայոյս խոստովանէին, ընդ այնուիկ և ոչարխանային.

651. դ. Չաշխարանաց համբարէին.

650. ժա-ժգ. Իսկ ընդ այնև նոյն ժամանակաւք... ի Հելուպուսոն Թղթովք գորս Գև Վազէսի անսոր.

648. թ. Բայց իրին զառ ժամանակաւքն արժանի յիշատակի եղեալ.

642. գ. Յուցանել կամեւ.

3. ժե. Իսկ Սեւերիոս Կայսր ի Գաղերիոսէ Մարսիմիանոսէ առաքեալ.

432. ժգ. Մերթ զայոյս խոստովանէին, ընդ այնուիկ և ոչարխանային.

431. ա. Աշխատանաց համբարէին.

429. Իսկ ընդ այնև նոյն ժամանակաւք... ի Հելուպուսոն Թղթովք գորս Գև Վազէսի անսոր Գ.

429. է. Բայց իր ինչ առ ժամանակաւքն արժանի յիշատակի եղեալ.

425. ժգ. Յուցանել կամեւ.

Σεβήρος δὲ δ Καίσαρ οὐδὸ τοῦ Γαλερίου Μαξιμιανοῦ πεφθεῖς.

Νῦν μὲν ταῦτα ἔλεγον, νῦν δὲ τὰ ἕτερα, συγκατετίθεντό τε ἐν ταυτῷ, καὶ ἤργοντο.

Τὸν σκυλμὸν (նիղուսիւն, վիլա, սանջանք) ὀπέμενον.

Ἰπὸ δὲ τούτου τὸν χρόνον... ἐν ὑπατεία Θεοδοσίου τὸ τρισκαίδέκατον, καὶ Οὐαλεντιανοῦ τὸ τρίτον.

Πρῶγμα μέντοι περὶ τόνδε τὸν χρόνον ἀξίον μνήμης γελνόμενον.

Δεικνόναι βουλόμενος μὴ

1. Սա այն հասուածին մասն է, որոյ հին Թարգմանութիւնը պակասորով էջմիաննի կեռաւ զրին մէջ, Մերթը վարչապետ նոր Թարգմա-

ներ է յոյն բնադրէն. չգիտեմ թէ իւր սենեցաւ բնադրին այլպէս է եղեր արդեօք, թէ անմասն գրութեան արդիւնք էր

Ե Զ Մ Ի Ա Ե Ն Ի Ե Պ Ա Գ Ի Բ

ԵՐԻՈՍԱՂԵՄԱՑ ԶԵՆՈՒԳԻՐ

ՅՈՒՆ . Բ Ե Պ Գ Ի Բ

ցառ միայն փորձապէս ունել (զանձն) Ի յիմաստասիրացն իրատուց .

638 . գ . Վասն զի յամիս , ոչ հասանես ինձ .

613 . գ . Վշտացուցանել զՀոռնագրիսն .

579 . Է . Ի վարս<sup>1</sup> քրիստոսն Եթեան ընդարձակիլ .

578 . Ժա . Ոմանք խնդրէին նոր քոստացանէ զՏիմոթէոս .

577 . Ժբ . Չի արդարս այսարիկ յարիւնսականս արանդ փոխեցան .

494 . գ . Գիսէր յանպատ .

432 . Թաղաւորեալ . ամս ժեշ կեցեալ ամս Ի՛Ի .

223 . Ժգ . Ի Քաղիա Ի քաղարկիացոց<sup>2</sup> մտեալ նորս .

201 . Իբ . Յայնժամ նախ եպարքոս կարգեաց .

175 . ք-ժ . Յուլիանոս զնոյն Հետայն Հելպատի ( , որ) նոր էր<sup>3</sup> Սարդիսիսն և Յուլիանոսի , և այլն .

ցնալ մի անփորձապէս ունել (զանձն) Ի յիմաստասիրացն իրատուց .

423 . ԺԷ . Վասն զի քե յամս , ոչ հասանես ինձ .

409 . Ի . Վշտացուցանել զհաւնագրիսն .

386 . ր . Ի Պարս քրիստոսն Եթեան ընդարձակիլ .

385 . Ժբ . Ոմանք խնդրէին նոստացանէ զՏիմոթէոս .

384 . Ժբ . Չի արդարս այսարիկ յարիւնսականս արանդ յարեցան .

2 . գ . Ի յարանդականն մանաւանդ փոփոխիսր .

291 . ԻԵ . Թաղաւորեալ ամս ժԵ , կեցեալ ամս Ի՛Ի .

165 . Ժգ . Ի Քաղիա Ի քաղար քիկիացոց մտեալ նորս .

149 . Ժբ . Յայնժամ նախ եպարքոս կարգեաց .

124 . ք-Է . Իսկ Յուլիանոս զնոյն Հետայն Հելպատոսի , որ էր առ Բետսիսիսն և Յուլիանոսի , և այլն .

ἀπειρωσ ἐχειν ἑαυτὸν τῶν φιλοσόφων παιδευμάτων .

Εἰ γὰρ βραδύνεις, οὐ καταλήψῃ με .

Κιδυνεύειν τοὺς δημοφίλους .

Τὸν ἐν Περσίδι χριστιανισμὸν πλατυνῆσαι .

Οἱ μὲν ἐζήτουν ἐν θρονισθῆναι Τιμόθεον ἀρχιεπίσκοπον .

Πῶσ οὗτοι οἱ ἄνδρες τῆ Ἄρειανῶν θρησκεία παρέμειναν .

Ἐπὶ τὸν ἡσυχιον μάλλον ἐτρέπετο .

Βασιλεύσασ ἔτη δεκαπέντε, ζήσασ ἔτη εικοσιτέσσαρα .

Ὅτι εἰς ἐν τὸν πολιχνίων εἰσελθόντος αὐτοῦ .

Καὶ τότε τὸν ἔπαρχον . . .

κατέστειν .  
Ἰουλιανὸς δὲ τῆ ἐξῆς ὄπαται Ἀρβιτιανὸς καὶ Δολιανὸς .

Ասոց նման զիս ուրիշ շատ ուղղելի կամ ծանօթութեան կարօտ բաներ և իմաստներ կան , որք իսկ և իսկ աչքի կը զարնեն , երբ համեմատուելու ըլլան բնազդին հետ . Ինչպէս օրինակ իմե , Դեղիոս (186 , ժբ) ուղղելի « Ազեղիոս » , Եւտիքիոս (207 , Է) ուղղելի « Եւգրոսիոս » , Եկեղեցի (454 , ք) ուղղելի « Եղեղիս » (տ՞՞ յետոյն) , արեւելից (377 , ժԷ) ուղղելի « արեւմտից » , Լապտիկոս (197 , գ) ուղղելի « Լարիկիոս » (Լաւրիկոս) , Երկուս (329 , ժգ) ուղղելի « Երկուցուն » , « զայլ մեզս անձին ապաստաներ »

(450 , ժ) ուղղ . « ամբաստանէր » (κατεγόρει) , առն (626 , Է) ուղղ . « այեր » կամ « աւղ » (ինչպէս ունի Երուսաղ . օրինակն) յն . ծ ձիթ , արեւելիցն (կողմանց , 634 , ժ) ուղղ . « արեւմայիցն » (տ՞՞ն իտերլան մեզն) , (խաւթացեալ) սղով (14 , ա) ուղղ . « սղուղ » (տն ըս ինչ յն յեբրայից) , յերարիս (174 , ժա) ուղղ . « յարարս » (եւ իտերլան) .

Մէկ երկու օրինակ եւս մէջ բերնք շափազանց բառացի կամ սխալ թարգմանութեան , և այդ յանցանքը միայն թարգմանչին ընծայելի է .

1 . Չարմանալի չէ՞ յարք . Հրատարակիչն (մէջ 613 . գ) ձեռագրի պարոցն որբարբեր է ըստ բնազդին և փոխեր է Ի Պարսիցն . Իսկ այս առիկ պահեր է Ի վարս փոխանակ Ի Պարս սրբազորու , առանց ծանօթութիւն մ'անգամ զնելու . այսպէս կ'ընէ յաճար :  
2 . Սոլիչի կամ Սոլիչիս է փոքրիկ քաղաք , ասան . Թարգմանիչն երկու բառ կարգացրեր է

չայն , լուս և ինչպէս , և վերջինս յասուկ անունն — Այս զիտարգութիւնք ըրեր է նաև Տէր-Մովսէսեան (էջ 223 . ա ծանօթ) :  
3 . Երբ բառին սղովանակն և տառն « հելպատիս » վերջի զերն է . « Հելպատիս որ էր » և այլն : Սոյն պարբերութեան Երուսաղեմի օրինակին « առ Բետսիսիս » անունն սխալ է :



1. Առողջապահութիւն առտնին, Կ. Պօլիս Տպագր. Նշան Կ. Պետրպէրեան 1898. զինն է 25 Ղը՛:

Երանօթ բանասերն Տօք. Տաղաւարեան իւր անհանձն զրականական երկերովը կ'ուզէ յափշտակել արժանաւոր զրուատիք մը, զոր յօտարութեամբ և իրաւամբ կը շնորհեմք այս յարատեանս գրչին: Թողունք իրեն տարիներ առաջ հրատարակած ուսից և անուսից համար շահաւէտ երկերն. սոյն Պատ. Տօքզօրը տարույս սկիզբէն զրչին մի աւելի աշխուժութիւն տալով, յաջողագբար հրատարակեց Մանրէարքանոթիան\*, զաղղիբրէն Տիեզերք և իտք կազմոթիանն\*\*, և վերջերս Աստիկն առողջապահոթիան՝ զոր հեղինակն կը յանձնէ ազգայնոց՝ «Բնագրքին և Աղօթագրքին ըրովն» զնել: Եթէ մազնիտի կտոր մը ալէ՛՛ ծուկ ովկիանոթին մէջ ճարտար նաւապետին կ'առաջնորդէ, առողջարանական մատենան ալ՝ կ'ուղղէ և կը հսկէ մարդու փափուկ, զիրայլայլակ և թանկագին կենաց վրայ: Ազգային գրականութեան մէջ ունիմք բաւական առողջարանական զրքեր, յոր զայս թէեւ ոչ ամենն կատարեալը՝ բայց ընտիրներէն մին կրնամք համարել՝ իւր նիւթոց ճոխութեամբ, և որ մեծն է, վասն զի բժշկի մը վրէի երկն է (հոս անշուշտ կրնամք ըսել. զարդպետեան առաց), և աբի առողջարանական օրինաց վրայ կազապարուած: Մոյն գործը, ինչպէս արդէն հեղինակը իւր յառաջարանին մէջ կը գրէ, մենք ալ ճննեցինք և տեսանք՝ որ ոչ միայն իրրու զատգիրք կրնայ ծառայել՝ այլ ամէն դասակարգի ոչ հասակի արանց և կանանց առողջապահիկ կենաց առաջնորդ մ'է:

Հեղինակը այս երկը բաժնած է Ութ ընդարձակ գլխակարգութեանց: Առաջնոյն մէջ կը խօսի մարդակազմութեան վրայ, որ

աշակերտաց համար աւելորդ է. վասն զի աշակերտք զեւ առողջարանական այս զատւնութեացը չսկսած, առաջուց համառօտ կամ ընդարձակ տեղեկութիւնք առած կ'ըլլան մարդակազմութեան վրայ՝ երբ Բնական պատմութեան շրջանը կ'աւարտեն: Բայց քանի որ հեղինակը այս երկը ազգային աշակերտներէն զատ՝ բարձր հայ հասարակութեան աւելն դատակարգի անձանց կը յանձնարարէ, յորոց ոմանք գուցէ մարդակազմութեան և ոչ այրուբն գիտեն, ուստի անոնց անհրաժեշտ էր տեղեկութիւն մի առնուկ իրենց կազմութեան վրայ, որուն առողջութեան կ'ուզեն խնամք տանիլ: Երկատիրութեանս այս գլխակարգութիւնը պատկերազարդ\*\*\* է. և իւրաքանչիւր պատկեր ըստ բաւականի որոշ գաղափար մի կու տայ՝ մարդու ներքին գործարաններու կազմութեան վրայ: Երկրորդին մէջ կը բացատրէ կենդանական և բուսական սննդաբար մարմինները, անոնց պատրաստութիւնը և պահպանումը. մի քանի էջերով կը յիշէ զանազան համեմեք, և նոյն իսկ քարոյական համեմեք. հեղինակն այս վերնագրով կ'իմանայ քաղցի այն ամենայն երեւոյթները, զոր օրինակ, գեղեցիկ պատրաստուած սեղան մի, զուարթ սեղանակիցներ, մարդագետնի կամ գեղանի տեսարանով սեղմը ճաշելն, նուագներով կամ խեղկատակներով, և կամ տխուր երեւոյթը, զոր օրմութեան սեղմի մէջ միտակ ճաշելն, գուժի հասնելն, և այլն, օրոնք ախորժ կը բանան կամ կը զոցեն: Սակայն ըստ մեր կարծեաց, զատոնք աւելի երեսակայեալ քան թէ քարոյական համեմեք կուցիւր է: Բնական (չուր) և արուեստական ըմպելեաց վրայ կարեւոր տեղեկութիւնք կու տայ. կը սորվեցընէ՝ թէ ինչ շահաւէտ և զանակաւ աննպարար նիւթերը իւրացընելու է: Երրորդին մէջ, շնչառութեան և ասոր

\* Հմտաւեց փոքրիկ երկ մ'է՝ ոչ գործնական այլ վարդապետական. հեղինակը ուսումնական դժուար բառերու կազմութեան մէջ բաւական յաջողքեր է:  
\*\* Ըստ մեր կարծեաց՝ արդոյ հեղինակը այս երկին սեղմ կրնար աւելի ազգագուտ զբնոյլ մը հրատարակել, քանի որ զայն հայերէն (չորմանեւերն շունիմք) չէ հրատարակած՝ այլ գաղղ

ղիբրէն (պակաս էր), որ ոչ հայուն և ոչ զաղղեացոյն հետաքրքրական է. վասն զի առոր նման անբաւ գերազանց, գաղղմատեան ներկան, որոնց ընդհանրաբար աւելի կը զիմեն ազգային և օտար ուսումնականք:  
\*\*\* Արբանջակէ 25 պատկեր, զորս հեղինակը իրեն միւս երկերուն մէջ մի քանի անգամ զործածած է:

կարեւոր նիւթին (օդ) զրայ յօղուածներ կը նուիրէ ։ Չորրորդ գլխակարգութեան մէջ՝ խնամքով առանձին զուգահերով կը դնէ աշխատութեան, մարմնամարզի (որուն կարեւորութիւնը մեր կրթական հաստատութիւնք պարսպանելի սնտարբերութեամբ չեն ուզեր զիտնայ), քնոյ վրայ կարեւոր գիտելիք . այս գլխակարգութեան մէջ չէ մոռցած մեր փափուկ զգայարանաց կիրառութեան մասին օգտակար խորհուրդներ տայն ։ Հետաքրքրական գլխակարգութիւն մ'է նաև Հիմնգործողը, ուր ընդ երկար և մանրամասնօրէն կը գրէ մորթային գրութեան, զանազան բաղանեաց և հագուստներու վրայ ։ Վեցերորդիւ մէջ կը ցուցնէ թէ մարդու առողջութեան վրայ ի՛նչ ազդեցութիւն ունին կլիման, հողն, ջուրն, բնակարանն, և այլն ։ Մեզ ամենէն հետաքրքրականք երեւցան էրօքներորդ և Ոթերորդ գլխակարգութեան պարբերութիւնք, յորոց առաջնոյն մէջ կը խօսի պէս պէս հիւանդութեանց, առնց ազդակներուն, պատճառներուն, փոխանցման, զգուշութեան և գարմանին վրայ՝ զոհնացողիչ կերպով . իսկ երկրորդին մէջ՝ արկածներու (թունաւորութիւն, շնչահեղձութիւն, շնչարգելութիւն, խեղդում, վիրաւորութիւն, որք միշտ կը պատահին), և անական զեղերու վրայ ։ Այս գնահատելի աշխատութիւնը կը կնքէ կհանքի և երկարակեցութեան հակիրճ յօղուածով մը ։ Պիտի չմոռնանք աշխատութեան ամենէն կարեւոր մասն ալ յիշելու, որ է իւր պարունակած նիւթոց այրութենի կարգաւ ցանկն, որ է գրքին բանային, զոր բաւական շտապով կազմած կը տեսնեմք, որուն աւելի խնամք տանելու էր ի դերութիւն առողջասէր ընթերցողին . վրաս զի շատ կարեւոր բառեր, զորս յիշած է երկին մէջ, կը պակսին սոյն ցանկէն . զոր օրինակ, ընդերառնի, ախորժատառք, հաստառք grippe, նացական շերտ f. éruptive, և այլն, և այլն ։

Ընդհանրապէս ուսումնական բառերու մէջ հետեւեր է Հ. Մ. Քալուստայ հանրագիտակ բառարանին, նաև ինքը տեղ տեղ նոր նոր բառեր կազմած է, յորոց շատերը լաւ յարմարացած է, թարգմանելով օտար բառերը ի հայ՝ ըստ սոց վերոյիշեալ բազմաբոլորին ։

բանասիրին ։ Չհակացանք՝ թէ ինչու հեղինակը՝ գաղ. Chlorose բառին՝ տեղ մի (էջ 21) Սխալադիտութեան, և ուրիշ էջ մի (374) Չորրորդութեան, և ուրիշ տեղ մը (էջ 114) Դառնակ կը սեփականէ ։ Լաւ չէ՞ քրոնի acide տեղ գործածել քրոնառս, նախ՝ որպէս զի ըստ . Հ. Քալուստայ տարբարանական յանգերու ուղղամիտ օրէնքը բոլորովին հաստատուի, երկրորդ՝ որպէս զի քրոն [տճ. քոչրոն] քացածով պարաստուած կանաչեղէնէ, և քրոն [պտտոլ] ածականն ուրուի ։ Այս պիտի այսքան համառօտ խօսելով այս երկին ուսումնական բառերուն վրայ, ուրիշ առթով ընդարձակօրէն կը յայտնեմք մեր կարծիքը ։

Հ. ՍՈՒՐԸ ԵՐԵՎԱՆ

3. Տարվնակամութիւն կամ Տեսակց և մարդաս ծագման խնդիրը . Միխիթարեան . տպարան, Վենետիկ, Ս. Ղազար. 1898. գինն է 1 Քր. ։

— Հ. Սիմոն Երեւմտաի Գործակալան գիտութեանց բազարքէն հանուած՝ մանր առուերով, քառածայ, երկիջեան, 24 էջերէ բաղկացեալ տետրակ մը, որուն նպատակն է ցուցնել՝ թէ Տարվնակամութիւնը կամ Յեղաշրջականաց վարդապետութիւնը չէ՛ հաստատեալ իրողութիւն, այլ ենթադրութիւն, որուն ի վկայութիւն կը բերէ նոյն իսկ նշանաւոր Տարվնակալանաց գրած տողերը ։ Այս փոքրիկ երկին մէջ իրբև ի թատեր՝ ի հանդէս կ'ելլեն Տարվին, Հէկքէլ, Հիւքոլայ, Ֆրքտ, Գանկոլրինի, Լամբրք, և այլ և ուսնուած Տարվնակալանք՝ իրենց բոլոր վարդապետութեամբք՝ զորոնք մի առ մի կը հերքէ Հէկիմակը՝ հետեւողութեամբ Գուչիմի և այլոց՝ հզօր տպացոյցներով . իրբև տարվնակալան գրուած՝ վերջին տարիներս երեւցան Մոնթր զամութեթիւն մէջ շարք մը յօղուածներու « Էվոլուցիայի գաղափարը » մակարդութեամբ . իսկ իրբև հակատարվնակալան գրուած՝ այս առաջին անգամ ի հրապարակ կ'ելլէ, թողով մի քանի Հանդիսից մէջ երեւցած մանր պատաստիկները ։ Արդարև համառօտ՝ բայց հմտալից տետրակիս երկասիրողը՝ պիտի հասնի իւր նպատակին եթէ

կարենայ թումք մը կանգնել տարվինական հոսանաց դէմ, որ օրէ օր կը ծաւայի նաեւ ազգերնու մէջ յանդէսս :

Սոյն երկի մասին տես Արմենիա (հոկտ. 8, 1898) լրագրին գնահատութիւնը :

Լ. ԱՐՄԵՆ ՂԱՅՆՍԵԱՆ

4. Հարեւանցի հայեացք Հայոց հիւն գրականութեան վրայ, Տետր Ա. Երկասիրեց հանդերձ ծանօթաբաններով, Լեւոն Գեորգեանց, Տիգրիս, 1898 :

Երեսուն էջերէ բաղկացեալ տետր մը, որ յարգ. Հեղինակը հարեւանցի կերպով կը շօշափէ հայկական հին գրականութեան պատկանելի հերոսները, և անոնց մատուցած անդին ծանայութիւնը՝ ոչ նկատմամբ միայն հայկական գրականութեան, պատմութեան կամ աշխարհագրութեան, այլ նաեւ իրենց դրացի արեւելեան ազգաց, որոց մասին եւս կու տայ ստոյգ տեղեկութիւններ. որոնք, ըստ խոստովանութեան իսկ հայերենագէտ հմուտ եւրոպացուց, շատ ծանրակշիւ են և իրենց ակնկալութենէն վեր : Համառօտիւ կը յիշէ հայ գրականութեամբ զբաղող և հայ եւրոպացի բանասէրները, և վերջաբանին մէջ կը գանգատի, և իրաւացի կերպով, հայ տարրի անտարբերութեան ևս Նախնիս և անոնց սրանչիլի գանձերը, և առ օտարս յարման վրայ : Բայց իրեն սուր տեսութեանց հետ ունի նաեւ ինչ ինչ կարծիքներ, որոնց թողունք անճշդութիւնը, նիւթին եւս անճաշ են :

ՆՈՅՆ

կարգայ, Մեծ բագառոր Մուստ(ա) աշլի իշխան ֆուստանի կամ կամկուսի. — և ապա կնքոյն ամբողջ նշանները միացնելով՝ բոլորովին տարբեր ընթերցուածով մը կ'ընէ. Մեծ բագառոր Մուստ(ի) ոս, որդի Դարահաշարայի. որովհետեւ իշխան բառին համապատասխան նշանը կը ցուցնէ միանգամայն որդի : Չանց չընենք յիշելու, որ հեղինակին ծանօթ են՝ հեթեան տրձանագրութեամբք զբաղող գիտնաց կարգալու որով թիւնները. և առանձինն յանուանէ կը յիշէ Պրոֆ. Սէյս, Հալեւի, Յենսէն, և այլն, և աւելի վերջնայն ընթերցուածոց կը հետեւի : Հոսկ ուրեմն, յարգ. և բաջահմուտ հեղինակն ինքն իրեն կը հարցնէ. Եթէ Հեթեանք՝ Նախահայք, են, և եթէ իրենց լեզուն հայերէն է, ինչու մեր լեզուին օգնութեամբ կարելի պիտի չըլլայ մեկնել այնքան հեթեան յատուկ անուններ, որք ծանօթ են ասորական, եգիպտական արձանագրութեանց, և ընտիր հեղինակաց ձեռքով : Եւ գովելի ազգասիրութեամբ իրեն պարծանք կը համարի՝ եթէ երբեք այս փառքը ստանայ մեր մայրենի լեզուն : Սակայն, կը յաւելու, ճմարտութիւնը պարզելու ժամանակին հասած չէ դեռ մեզի համար. և Ծ. Լիւորմանի խօսքով կը կնքէ. « Nous n'avons besoin que de savoir attendre ».

ՆՈՅՆ



5. A PROPOS DES DEUX SCEAUX HÉTÉENS  
PAR K. J. BASMADJIAN

Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Ա Մ Ի Թ

ՀՈՎՏԵՄԲԵՐ 24

ԱՆԳՂԻԱ — ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

“Proceedings of the Society of Biblical Archeology”, հանդիսին Յունիս ամսէն հանուած՝ Հինգ համառօտ՝ այլ հմտալից էջերէ բաղկացեալ տետրակ մը, որ կը խօսի՝ Հանդես ամսօրեայի 1898, Մայիսի պրակին մէջ հրատարակած երկու կնքոց վրայ, որոնք տետրակիս առաջին էջին մէջ գրուած են : Հեղինակը՝ մեծազոյն կնքոյն վրայ զգտնելով հեթեան ոչ մի նշան՝ կ'անցնի ուսումնասիրելու փոքրագոյնը : Վերջնայն վերջալուստ (առ այժմ՝ ենթադրութեամբ միայն) կը

ՍԻՐՂԱՐ ՔԻՆՔԸ Ի ՅԱՂՊԱ ՄԱՐԴԱՆ զնդապետին հետ տեսութեանէն վերջը՝ յեր կրցած համոզել զաւլիւստի ոպայն վերցնելու Յալուստի զաւլիւստի զրօշը, զի նա կ'ըսէր՝ որ Իւր վարչութեան հրամանով կը գտնուէր հետ Կ Կ